ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 280-Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության պետական կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ հաշվեքննի պալատի 2021թ.

հոկտեմբերի 29-ի թիվ ***280-Ա*** *որոշմամբ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 9
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 10
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 12
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 13
8. Հետհսկողական գործընթաց - էջ 17
9. Առաջարկություններ - էջ 19

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 217-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի թիվ 1121 որոշում, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում, ՀՀ կրթության և գիտության նախարարի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահի հրամաններ:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև հոկտեմբերի 29-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

2. **Կոմիտե** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:

3. **Ծրագիր 1** – (1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագիր:

4. **Ծրագիր 2** – (1162-11004) «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագիր:

4. **Ծրագիր 3** – (1162 - 11005) «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագիր:

5. **Ծրագիր 4** – (1162-12001) «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագիր:

6. **ԾՐԱԳՐԵՐ** - Ծրագիր 1-ից Ծրագիր 4-ը ներառյալ:

7. **ԳԱԱ** – Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա:

8. **ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան:

9. **Հոդված 1** – (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»:

10. **Հոդված 2** – (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»:

11. **ԳՄԱ** - Գնումների միասնական անվանացանկ:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. վեց ամիսների պլանի և ճշտված պլանի ընդհանուր տարբերությունը կազմել է 930,422.5 հազ. դրամ, որը վերաբերվում է Ծրագիր 1-ին (332,768.3 հազ. դրամ), Ծրագիր 2-ին (-4,184.9 հազ. դրամ) և Ծրագիր 3-ին (601,839.31 հազ. դրամ): Ըստ նշված ծրագրերի տարբերությունները պայմանավորված են ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն, 2021թ. մարտի 25-ի թիվ 397-Ն և ապրիլի 8-ի թիվ 524-Ն որոշումներով կատարված համապատասխան փոփոխություններով:

Կոմիտեի 2021թ. վեց ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ում ֆինանսավորումը կազմել է 4,029,197.1 հազ. դրամ, որը ճշտված պլանի (5,875,552.2 հազ. դրամ) նկատմամբ կազմել է 68,6 % կամ թերֆինանսավորումը՝ 1,846,355.1 հազ. դրամ: Կոմիտեի 2021թ. վեց ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի հանդեպ թերֆինանսավորումները պայմանավորված են մի քանի հանգամանքներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. վեց ամիսներ ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. վեց ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	2	3	4	5	6
1	Ծրագիր 1	3,558,205.3	2,911,508.9	646,696.3	Կոմիտեի գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունները, ելնելով գործունեության առանձնահատկություններից, 2021թ. տարեկան նախապես պլանավորված ծախսերից առաջին կիսամսյակի համար նախատեսված որոշակի ծախսեր տեղափոխել են հաջորդ եռամսյակներ:
2	Ծրագիր 2	374,954.8	358,258.8	16,696.0	
3	Ծրագիր 3	1,706,328.8	591,454.3	1,114,874.5	Տարբերությունը պայմանավորված է նախատեսված, սակայն դեռևս չկայացած թեմատիկ մրցույթների հաղթողների ֆինանսավորման բացակայությամբ:

4	Ծրագիր 4	236,063.3	167,975.0	68,088.3	Ֆինանսավորումը տրվում է գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտերի հիման վրա, որոնք ճշտվում են յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով՝ կապված տվյալ կազմակերպություններում թեկնածուների և դոկտորների փաստացի թվի փոփոխությունների հետ:
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
Ընդամենը՝		5,875,552.2	4,029,197.1	1,846,355.1	

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի և դրամարկղային ծախսի (4,019,360.7 հազ. դրամ) միջև առաջացել է 9,836.4 հազ. դրամի տարբերություն (Ծրագիր 1-ում՝ 9,686.4 հազ. դրամ և Ծրագիր 3-ում 150,0 հազ. դրամ), ինչը վերը հիշատակված ընդհանուր թերֆինանսավորման և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների ճշտված պլանի հանդեպ դրամարկղային ծախսի տարբերության՝ 1,856,191.5 հազ. դրամի, հանրագումարն է: Ծրագիր 1-ում 9,686.4 հազ. դրամի մնացորդը պայմանավորված է ԳԱԱ կողմից կազմակերպված սարքավորումների գնման գործընթացի ձգձգմամբ, որի արդյունքում հնարավոր չի եղել վճարումն իրականացնել 2021թ. առաջին կիսամյակում և այն տեղափոխվել և իրականացվել է երրորդ եռամսյակում: Կոմիտեի Ծրագիր 3-ում 150,0 հազ. դրամի մնացորդը պայմանավորված է Հոդված 1-ով ֆինանսավորվող գիտական կազմակերպության կողմից ներկայացված 2021թ. երկրորդ եռամսյակում կատարված հայտի ճշգրտմամբ, ինչի արդյունքում ֆինանսավորվել է նախատեսվածից պակաս գումար:

Ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի Կոմիտեի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև առկա է 188,104.4 հազ. դրամի տարբերություն, որը ըստ Ծրագիր 1-ի կազմել է + 202,515.6 հազ. դրամ, ըստ Ծրագիր 2-ի՝ - 5,948.5 հազ. դրամ, ըստ Ծրագիր 3-ի՝ - 12,922.0 հազ. դրամ, իսկ ըստ Ծրագիր 4-ի +4,459.2 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 2):

Կոմիտեի Ծրագիր 1-ում 2021թ. վեց ամիսների փաստացի ծախսերի՝ 202,515.7 հազ. դրամով դրամարկղային ծախսերի գերազանցումներն ըստ հոդվածների արձանագրվել են.

- Հոդված 1-ում դեբիտորական պարտքերն նվազել են 76,241.0 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերն աճել են 1,265.0 հազ. դրամով, որի արդյունքում փաստացի ծախսերը 77,506.0 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

- Հոդված 2-ում դեբիտորական պարտքերը նվազել են 70,007.7 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերն աճել են 55,001.9 հազ. դրամով որի արդյունքում փաստացի ծախսերը 125,009.6 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

Աղյուսակ 2

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. վեց ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. վեց ամիսներ						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Տարբերություն (+, -) Սյունակ 6 – Սյունակ 7	Սյունակ 8 – Սյունակ 5 (+, -)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	Ծրագիր 1	2,901,822.5	3,104,338.2	+ 202,515.7	*- 146,248.7*	*+ 56,266.9*	- 202,515.6	*0,1*
2	Ծրագիր 2	358,258.8	352,310.3	- 5,948.5	*5,948.5*	*0,0*	+ 5,948.5	*0,0*
3	Ծրագիր 3	591,454.3	578,532.4	- 12,922.0	*13,412.0*	*+ 490.0*	+ 12,922.0	*0,0*
4	Ծրագիր 4	167,825.0	172,284.2	+ 4,459.2	250.0	+ 4,709.2	- 4,459.2	0,0
Ընդամենը՝		4,019,360.7	4,207,465.0	*+ 188,104.4*	*-126,638.2*	*+ 61,466.1*	*- 188,104.3*	*0,1*

Կոմիտեի Ծրագիր 1-ի նշված հոդվածներում գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակահատվածում պարտավորությունների կատարման ընթացքում տեղի են ունեցել դեբիտորական պարտքի նվազումներ (146,248.7 հազ. դրամ) և 2021թ. տարեկան կտրվածքով

ծախսերի շարունակական առանձնահատկությամբ (հիմնականում հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա համար հաշվարկված, սակայն չվճարումը հաջորդ ամիս տեղափոխված աշխատավարձեր) պայմանավորված ձևավորվել են կրեդիտորական պարտքերի աճեր (56,266.9 հազ. դրամ):

Կոմիտեի Ծրագիր 2-ի Հոդված 2-ում 2021թ. վեց ամիսների դրամարկղային ծախսերը 5,948.5 հազ. դրամով գերազանցել են փաստացի ծախսերին: Այն պայմանավորված է տարեկան կտրվածքով չիրականացված ծախսերի շարունակականության հետ կապված դեբիտորական պարտքերի աճով, իսկ կրեդիտորական պարտքեր չեն հաշվառվել:

Կոմիտեի Ծրագիր 3-ի Հոդված 2-ում, 2021թ. վեց ամիսների դրամարկղային ծախսերը 12,922.0 հազ. դրամով գերազանցել են փաստացի ծախսերին, ինչը պայմանավորված է դեբիտորական պարտքերի 13,412.0 հազ. դրամով նվազման և կրեդիտորական պարտքերի 490.0 հազ. դրամով աճման բացարձակ հաշվարկով:

Կոմիտեի Ծրագիր 4-ում 2021թ. վեց ամիսների դրամարկղային ծախսերի՝ 4,459.2 հազ. դրամով փաստացի ծախսերի գերազանցումներն արձանագրվել են Հոդված 2-ում՝ դեբիտորական պարտքերի 250.0 հազ. դրամով և կրեդիտորական պարտքերի 4,709.2 հազ. դրամով աճման հանգամանքներով, ինչը պայմանավորված է գիտական և գիտատեխիկական կազմակերպություններում աշխատավարձերի հետ հավելավճարների (2021թ. հունիս ամսվա համար հաշվարկված, սակայն հուլիսին վճարված) նախորդ ամսում հաշվարկման, սակայն փաստացի հաջորդ ամսում վճարման հետ:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կոմիտեից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից, հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. վեց ամիսների ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար դիտարկվել են նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականները: Հաշվեքննության ժամանակ կարևորվել է ՀՀ կառավարություն ներկայացրած բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալների ընդգրկելու խնդիրները:

Կոմիտեի 2021թ. ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված անհամապատասխանությունները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. ընդհանուր տարեկան պլանը կազմել է 10,975,506.7 հազ. դրամ, ճշտված տարեկան պլանը 13,057,876.0 հազ. դրամ, տարբերությունը՝ 2,082,369.3 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով կատարված 2,089,976.9 հազ. դրամ փոփոխություններով (Ծրագիր 1-ում՝ 760,852.1 հազ. դրամով, Ծրագիր 3-ում՝ 1,338,424.5 հազ. դրամներով ավելացումներով, իսկ Ծրագիր 2-ում՝ 9,299.7 հազ. դրամով նվազեցմամբ), ինչպես նաև՝ վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխման միջոցով նվազեցմամբ՝ 7,607.6 հազ. դրամ (Ծրագիր 1):

Նախարարության Կոմիտեի ամփոփ և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան և վեց ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Նախարարության Կոմիտեի և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի վեց ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	2021թ. տարեկան պլան	Փոփոխություններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան ճշտված պլան**	2021թ. վեց ամիսներ						Կատարման գործակիցը	
		ՀՀ կառավարության կողմից (+, -)	Վերադասի կողմից (+, -)		**2021թ. առաջին կիսամյակի պլան**	Փոփոխություններ առաջին եռամսյակի պլանում: ՀՀ կառավարության կողմից (+, -)	Փոփոխություններ առաջին եռամսյակի պլանում: Վերադասի կողմից (+, -)	**2021թ. առաջին կիսամյակի ճշտված պլան**	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Կոմիտե ***(105015)***	**13,640,062.1**	**+ 2,229,644.0**	0.0	**15,869,706.1**	**6,130,737.3**	+ 995,459.9	0.0	**7,126,197.2**	**5,236,705.1**	**5,223,109.7**	**5,483,698.5**	***32.9***	***73.3***
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

Ծրագիր 1	Ծրագիր 2	Ծրագիր 3	Ծրագիր 4	**Ընդամենը՝ ԾՐԱԳՐԵՐ**
7,153,967.4	**842,532.7**	**2,454,421.6**	**524,585.0**	10,975,506.7
+ 760,852.1	-9,299.7	**1,338,424.5**	--	**2,089,976.9**
-7,607.6	--	--	--	**-7,607.6**
7,907,211.9	833,233.0	**3,792,846.1**	**524,585.0**	13,057,876.0
3,225,437.0	**379,139.7**	**1,104,489.7**	236,0.63.3	**4,945,129.7**
+ 336,271.7	**-4,184.9**	**+ 602,291.0**	--	+ 934,337.8
- 3,463.4	--	- 451.9	--	- 3,915.3
3,558,205.3	374,954.8	1,706,328.8	236,0.63.3	**5,875,552.2**
2,911,508.9	358,258.8	591,454.3	167,975.0	4,029,197.1
2,901,822.5	358,258.8	591,454.3	167,825.0	4,019,360.7
3,104,338.2	352,310.3	578,532.4	172,284.2	4,207,465.0
36.7	***43.0***	***15.6***	***32.0***	***35.4***
81.8	***95.5***	***34.7***	***71.1***	***68.6***

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Կոմիտեի 2021թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվեց, որ.

6.1.1 Կոմիտեն «Գնանշման հարցում» ընթացակարգով, ԳԿ-13 ծածկագրով կատարված գնման ընթացքում «Պայմանագիր կնքելու որոշման մասին» հայտարարությունը «Procurement.am» տեղեկագրում չի հրապարակվել:

Առկա է անհամապատասխանություն 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«...խնդիրը տեխնիկական է, կապված է ինտերնետ կապի խափանման հետ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.1.2 «Մեկ անձից գնում» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում «Procurement.am» տեղեկագրում չի հրապարակվել հանձնաժողովի քարտուղարի և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված տարբերակները:

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 7-րդ բաժնի 43-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը բացակայում է:

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ

ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվել է, որ.

7.1.1 Կոմիտեի Ծրագիր 1-ում ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների կատարողականների զրոյական մակարդակների կամ էական թերակատարման պայմաններում 2021թ. վեց ամիսների կտրվածքով դրամարկղային ծախսերի հանդեպ փաստացի ծախսերը գերազանցել են 202,515.6 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«...տվյալ փաստացի ծախսերը գոյացել են ոչ թե պակաս իրականացված կամ չիրականացված արդյունքային ցուցանիշներից, այլ իրականացված ցուցանիշների գծով առաջացած փաստացի ծախսն են՝ պայմանավորված այդ ցուցանիշների շարունակականությամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ:

7.1.2 Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 2-ում 2021թ. հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով 342,929.2 հազ. դրամով պլանի ավելացմամբ ճշգրտման (1,279,621.5 – 936,692.3), ինչպես նաև 646,696.3 հազ. դրամի թերֆինանսավորման և 9,686.4 հազ. դրամի ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերության պայմաններում, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի բացարձակ հաշվարկով պայմանավորված փաստացի ծախսը 125,009.6 հազ. դրամով գերազանցել է դրամարկղային ծախսին:

7.1.3 Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 1-ում 2021թ. վեց ամիսներին 10,160.9 հազ. դրամով պլանի նվազեցմամբ ճշգրտման (2,007,155.6 – 2,017,316.5), 29,356.3 հազ. դրամ թերֆինանսավորման պայմաններում 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներով փաստացի ծախսերը 77,506.0 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«...թերֆինանսավորումները պայմանավորված են կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հայտերի նախատեսվածից քիչ ծավալով, իսկ փաստացի ծախսի գերազանցումը դրամարկղային ծախսին տեղի է ունեցել ոչ թե նշված հոդվածի

ամբողջ ծավալով, այլ այդ հոդվածով իրականացվող որոշ կոնկրետ պայմանագրերի գծով՝ կապված հաշվարկված, բայց չվճարված աշխատավարձերի առկայությամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Առարկությունը ընդունվում է մասամբ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գրադարանի մասով: Արձանագրվածի մնացածի մասով հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ:

7.1.4 Կոմիտեի Ծրագիր 3-ում 2021թ. առաջին կիսամյակի 601,839.1 հազ. դրամով պլանի ավելացմամբ ճշգրտման (1,706,328.8 – 1,104,489.7) և գիտական կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտերի մի մասի ընդունման և փորձաքննության փուլում գտնվելու հանգամանքով պայմանավորված 1,114,874.5 հազ. դրամի թերֆինանսավորման արդյունքում արձանագրվել է փաստացի ծախսի 12,922.0 հազ. դրամով դրամարկղային ծախսին գերազանցում: Նշված հանգամանքը համապատասխանաբար ուղեկցվել է Կոմիտեի Ծրագիր 3-ի հաշվետու ժամանաշրջանի ոչ ֆինանսական, արդյունքին միտված թվով 10 ցուցանիշներից 2-ում ներկայացված էական թերակատարումներով, ինչպես նաև ցուցանիշների 2021թ. տարեկան և/կամ կիսամյակային տվյալների արձանագրման բացակայությամբ (թվով 5 -ում):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«Արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշները միշտ չէ, որ համընկնում են զուտ ֆինանսական ցուցանիշների հետ և դրանց կատարողականի տոկոսային ցուցանիշները կարող են տարբերվել իրարից, ինչպես նաև բյուջետային որոշակի ժամանակահատվածի կտրվածքով կարող են լինել նաև զրոյական: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդունքային ցուցանիշները այս ծրագրի մասով խիստ բազմազան են և դրանցից որոշները կարող են առկա լինել մի քանի թեմաներում, իսկ որոշները կարող են առկա լինել միայն մեկ մրցույթով հայտարարված թեմաներում, տվյալ դեպքում այդ մրցույթները դեռևս չեն ամփոփվել:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ:

7.1.5 Կոմիտեի Ծրագիր 4-ում 2021թ. վեց ամիսների 68,238.3 հազ. դրամի թերֆինանսավորման, ինչպես նաև կազմակերպությունների կողմից թեմաներում ընդգրկված հավելավճարներ ստացող գիտաշխատողների փաստացի թվաքանակի նվազման պայմանավորված տնտեսված 88,625.1 հազ. դրամի պայմաններում, դրամարկղային ծախսերի հանդեպ փաստացի ծախսերը գերազանցել են 4,459.2 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններում արտացոլված փաստացի ծախսերի թվերը ձևավորվում են Կոմիտեի կողմից ներկայացված եռամսյա հաշվետվությունների հիման վրա, որոնք ներկայացվում են մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Կոմիտեի կողմից հաշվեքննիչ պալատին տրամադրված տվյալները կազմվել են ավելի ուշ, և քանի որ կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է իրենց կողմից ներկայացվող հայտերի հիման վրա, որոշ կազմակերպությունների կողմից հայտերի ուշ ներկայացնելու պատճառով դրանցում առկա տվյալները (այդ թվում՝ փաստացի ծախսը) չեն ներառվել ֆինանսական հաշվետվության մեջ, սակայն ներառվել են հաշվեքննիչ պալատին տրամադրված տվյալներում:

Նման անհամապատասխանությունները կրում են տեխնիկական բնույթ և տարեկան հաշվետվությունների արդյունքում ամբողջովին շտկվում են»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

2021թ. վեց ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 2 անհամապատասխանություններից և թվով 5 այլ փաստերից Կոմիտեն *(Կոմիտեի նախագահի 2021թ. հոկտեմբերի 20-ի թիվ 08-01/26 գրությունը կցվում է)* ըստ էության առարկություններ չի ներկայացրել թվով 5-ի վերաբերյալ, որոնց առումով տրվել են պարզաբանումներ և բացատրություններ, իսկ թվով 1-ի վերաբերյալ՝ արձագանքը բացակայում է: Հաշվեքննության օբյեկտի ներկայացված առարկություններից թվով մեկն ընդունվել է, իսկ մեկի մասով առարկությունն ընդունվել է մասամբ:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունվի է/ Ընդունվի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ (Կոմիտեի նախագահի 18.08.2021թ թիվ 9/9.1/18017-2021 գրություն):
Անհամապատասխանությունների և այլ գրավոր տեղեկատվության վերացման առաջարկությունների վերաբերյալ				
1	2021թ. գնումների պլանում հաստատված և հրապարակված «Համակարգչային կոնֆիգուրացիաների ընդլայնման ծառայություններ» գնման առարկայի ԳՄԱ ծածկագիրը (72541100) սխալ է լրացվել (50311240), որի արդյունքում պետք է կիրառվեր «Գնանշման հարցում» գնման ընթացակարգ՝ «Մեկ անձից գնում» ընթացակարգի փոխարեն:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	*«...Նշված անհամապատասխանությունը ըստ էության թյուրիմացության արդյունք է, երկու գնումների համար սխալմամբ լրացվել է նույն ծածկագիրը...» (Կոմիտեի նախագահի 20.07.2021թ թիվ 08-01/20 գրություն):* *Կոմիտեի նախագահի հրամանի 3-րդ կետով հանձնարարվել է Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին «...ուսումնասիրել և Կոմիտեի նախագահին զեկուցել վերահսկողական այնպիսի գործիքակազմերի ներդրման իրավական հնարավորությունները, որոնց կիրառմամբ գնումների ամբողջական գործառույթները կհամապատասխանեցվեն գնման ոլորտը կարգավորող իրավակարգավորումների պահանջներին»* ***Վերջնաժամկետ՝ մինչև 2021թ ավարտ:***
2	Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների զրոյական մակարդակներն ու էական թերակատարումները: Վերահսկողական ընթացակարգեր սահմանել, որպեսզի դրանց հետևանքներով ձևավորված տնտեսումների, ցածր կամ զրոյական կատարողականները ազդեցություն չունենան Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի բյուջետային հատկացումների, ֆինանսավորումների, դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունների վրա:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	*«...փաստացի ծախսերը գոյացել են պայմանավորված դրանց իրականացման տարեկան շարունակականության առանձնահատկություններով...» (Կոմիտեի նախագահի 20.07.2021թ թիվ 08-01/20 գրություն):* *Կոմիտեի նախագահի հրամանի 1-ին կետով հանձնարարվել է Կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը «...ուսումնասիրել և Կոմիտեի նախագահին զեկուցել վերահսկողական այնպիսի գործիքակազմերի ներդրման իրավական հնարավորությունները, որոնց արդյունքում հնարավոր կլինի վերահսկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյակային ոչ ֆինանսական, արդյունքին միտված չափորոշիչների զրոյական և էական թերակատարումները:»* ***Վերջնաժամկետ՝ մինչև 2021թ ավարտ:***

3	Ուսումնասիրել, վերլուծել և մոնիթորինգի ենթարկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հայտերի ներկայացման եռամսյակային պարբերական և համամասնական գործընթացները՝ անկած վերջիններիս տարեկան գործունեության առանձնահատկություններով պայմանավորված պլանավորման, ֆինանսական միջոցների հայտավորման և ծախսերի կատարման շարունակական մեխանիզմների կիրառման:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	*«...թերֆինանսավորումների պատճառը պայմանավորված է կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի նախատեսվածից քիչ ծավալով ...» (Կոմիտեի նախագահի 20.07.2021թ թիվ 08-01/20 գրություն):* *Կոմիտեի նախագահի հրամանի 2-րդ կետով հանձնարարվել է Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը «...ուսումնասիրել, վերլուծել և մոնիթորինգի ենթարկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի ներկայացման եռամսյակային պարբերական և համամասնական գործընթացները՝ պայմանավորված դրանց տարեկան գործունեության առանձնահատկություններով:»* ***Վերջնաժամկետ՝ մինչև 2021թ ավարտ:***
4	Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան շտեմարանում առկա տեղեկատվության Կոմիտեի Ծրագիր 2-ի 2021թ. երեք ամիսների ոչ ֆինանսական, արդյունքին միտված չափորոշիչների «Հետազոտությունների քանակ» (թվով 4) և «Հետազոտություններում ներգրավված կանանց թվաքանակ» (թվով 333) բաղադրիչներով ցուցանիշների գծով տվյալներ չեն նախատեսվել:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	*«Որևէ անհրաժեշտություն չկա արհեստականորեն սահմանելու հետազոտողների սեռատարիքային թվաքանակ» բաղադրիչը:»*

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Կոմիտեին.

9.1 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ կվերահսկվեն գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների զրոյական մակարդակներն ու էական թերակատարումները: Սահմանել այնպիսի վերահսկողական ընթացակարգեր, որոնց կիրառմամբ կբացառվեն Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում ներկայացված ամփոփ ֆինանսական և արդյունքին միտված ոչ ֆինանսական ցուցանիշների բովանդակային և եռամսյա պարբերականությամբ հրապարակված տվալների արժանահավատության և իրավասության նկատմամբ անհամապատասխանությունները՝ անկախ դրանց տարեկան կտրվածքով շարունակական բնույթից:

9.2 Ուսումնասիրել, վերլուծել և մոնիթորինգի ենթարկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից եռամսյա պարբերությամբ Կոմիտե ներկայացվող ֆինանսավորման հայտերի ուշացումները, դրանց համամասնական գործընթացները և արդյունքին միտված ոչ ֆինանսական ցուցանիշների բովանդակային, իրատեսական և տվյալ եռամսյակին վերաբերելու հանգամանքները:

9.3 Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով: Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների, պահանջվող ժամանակահատվածների կտրվածքով տեղեկույթի տրամադրման ճշգրտության ապահովման ուղղությամբ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյան